ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 305-Ա/2 «02» մարտի 2021

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ՀՄ. 647- Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերը հաստատելու մասին» հմ. 647-Ա/Ք հրամանի՝

***1) Հավելված 1-ի*** «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության (բակալավր ու անընդհատ և ինտեգրացված) մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկ»-ում՝

ա. «01 Կրթություն» ոլորտի «0114 Առարկայական ուղղվածությամբ մանկավարժություն» բաժնի ***«011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն»*** մասնագիտության 3-րդ սյունակի ***«011401.10.6 Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա»*** տողը շարադրել նոր խմբագրությամբ՝

***«011401.10.6 Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա»***,

բ. «03 Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ» ոլորտի «0312 Քաղաքագիտություն» բաժնի ***«031201.00.6 Քաղաքագիտություն»*** մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել նոր տողով՝

***«031201.02.6 Քաղաքականություն և պետական կառավարում»***:

***2) Հավելված 2-ի*** «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոս) մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկ»-ում՝

ա. «01 Կրթություն» ոլորտի «0114 Առարկայական ուղղվածությամբ մանկավարժություն» բաժնի ***«011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն»*** մասնագիտության 3-րդ սյունակի ***«011401.10.7 Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա»*** տողը շարադրել նոր խմբագրությամբ՝

***«011401.10.7 Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա»***,

բ. «03 Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ» ոլորտի «0318 Միջոլորտային մասնագիտություններ» բաժնի ***«031801.00.7 Միջազգային հարաբերություններ»*** մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել նոր տողով՝

***«031801.05.7 Ամերիկագիտություն»***,

գ. «04 Գործարարություն, վարչարարություն և իրավունք» ոլորտի «042 Իրավունք» բաժնի ***«042101.00.7 Իրավագիտություն»*** մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել նոր տողով՝

***«042101.17.7 Մարդու իրավունքներ և սոցիալական արդարություն»***:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

02.03.2021

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211